

Թիւ 26016
Սեպտեմբեր 19, 1978

Մեծայարդ
Տոքթ. Վարդան Այնածեան
Թորոնթօ.

Յարգելի Տոքթ. Այնածեան,

Առաջնորդի Փոխանորդ Հոգշ. Տ. Յուսիկ Շ. Վրդ. Պահտասեան մեզի ներկայացուց իր տեղեկագիրը՝ Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ մէջ իր նախագահութեամբ գումարուած ժողովին մասին, մասնակցութեամբ Եկեղեցւոյ ծխական Խորհուրդին ինչպէս նաեւ մեր կողմէ նշանակուած հինգ ազգայիններուն:

Թորոնթոյի մէջ Երկրորդ ծուխ մը կազմելու մեր ծրագիրը յառաջ տանելու համար ան հրաժեշտ է նիմինական կարգ մը աշխատանքներ կատարել, եւ այս նպատակով կը փափաքինք որ դուք գլխաւորէք մեր կողմէ նշանակուած հինգ ազգայիններէն բաղկացած յանձնախումբը, եւ համիք հետեւեալ աշխատանքին ժեռնարկել.

1. Քարտէսի վրայ նշանակել իբրեւ սահման Երկու ծուխերու ՝՝ Տօն Կալի Փաքքուէյ՝՝ մեծ պողոտան՝ որ կ' Երկարի Հիւսիսէն դէպի Հարաւ:

2. Երկրորդ ծուխի սահմանը պիտի ըլլայ այս գիծէն Արեւելք զըստ նուող մասը: Համեցէք այս Արեւելեան մասին մէջ կարմիր մատիտով նշել հայաբնակ շրջանները եւ ստուգել թէ քանի՞ հայ ընտանիքներ կը բնակին իւրաքանչիւր շրջանակի մէջ:

3. Համեցէք կազմել իւրաքանչիւր շրջանակի մէջ բնակող հայութեան անուններու եւ հասցէններու ցանկը:

4. Համեցէք առանձինն արձանագրել ցանկը անուններու եւ հասցեններու Արեւմտեան քաժնին մէջ գանուող այն ընտանիքներուն որոնք ձեր հաւաքած ցանկին մէջ ունիք:

5. Այս բոլոր տեղեկութիւնները, քարտէսով եւ անուններու ցանկերով, առաջին առիթով հաճեցէք մեզի դրկել, որպէս զի Թեմական Խորհուրդին ներկայացնենք, եւ Թորոնթոյի մէջ երկրորդ ծուխը կազմվկերպելու համար առաւել ազգայիններ եւս նշանակենք իբրեւ անդամ կազմակերպիչ յանձնախումբին:

Սպասելով վերոյիշեալ տեղեկութեանց, ձեզի եւ յանձախումբի միւս անդամներուն կը ցանկանք առաւել քաջառողջութիւն եւ յաջողութիւն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՄ
Առաջնորդ